ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թ. մայիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ <<Բ>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին 27 ծնող, դասվար Նելլի Քոչարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմությունը քննարկելու հարցը:
2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Լսեցին
1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմությունը քննարկելու հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Նելլի Քոչարյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը, տեղեկացան թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ և ինչ պետք է անեն ամառային արձակուրդներին,որպեսզի խնդիրները վերանան: Ամփոփվեցին տարեկան գնահատականները, աշակերտների վարքը, վարքային խնդիրները, դրանցից ձերբազատվելու ուղիները:

Որոշեցին

Ամառային արձակուրդներին կատարել տրված հանձնարարությունները,լինել ուշադիր ձեռագրերի նկատմամբ,շատ ժամանակ տրամադրել ընթերցանությանը:

Լսեցին
2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ծնողները խոսեցին էքսկուրսիաների կարևոր նշանակության մասին, որպես աշակերտների հանգիստը կազմակերպելու, հայրենագիտական գիտելիքները հարստացնելու և նրանց միջև միջանձնային հարաբերությունների ձևավորման կարևոր գործիք:
Դասվար Նելլի Քոչարյանը առաջարկեց էքսկուրսիան կազմակերպել Կարբիի ձորում և տառերի պուրակում:
Առաջարկը ընդունվեց բոլորի կողմից միաձայն:

Որոշեցին

Հավաքել 3000 դրամ գումար էքսկուրսիան լիարժեք կազմակերպելու, տրանսպորտային ծախսերը հոգալու և սնունդ ձեռք բերելու համար:

Այդ աշխատանքները հանձնարարվեց ծնողկոմիտեի անդամներին: Լինել հետևողական հատկապես տրանսպորտի ապահովության հարցում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Անուշ Ներսիսյան

Քարտուղար՝ / Անի Փանոսյան